

Ճէր. կարբպէտ, դին ա ձիին մէկին վրա
հէծի տը մանչէօցը էտղլէն հասի:

— Ախպար, ձին իշ պիտի ընիմ. աս
լենէարին մէշ ձի՞ կը քալէա. էս հիմա վիւր
ին նըս՝ կը բըրիմ:

— Էս ձին հեղնաս տիյի (որպէսզի) շիմ
ըսէար. կը լլա էօր պէ*կը կը լլա:

— Պէ*կը լլա նէա, ֆէօն ձիին դը*

տիր (պակասութին) շիքա:

Կարբպէտը կ'իտ, մեջկը կը գը*սա կը
նէյի էօր կրիի լէազի ձի միսիր (եղիպ-
տացորեն) բէացազ կիւք-ն, փիշրիւնը-
(ամրող) մէկն Մանիկին քիօլ կիւք-ն:

Մանիկը կ'ըսէա.

— Ծօնիս մախանչիսկիկ, չօմկօր ձէն-
կէծ մընկը բախբաշիսկի՞նը¹:

— Մըրճէնք մէկնէր փաքճայըբճը ակ-
ճառականնք. թէօկնէօղ տըկնիր թէօկնէօղ
իկնիակնան:

— Ապճաս մապճարդիպճիկըճը կէպ-
ճիթապճան մապճարթապճու կըպճրիպճին:

Լազէարը կը ճըն, իրէանց ա գետոր կը
դէառնան. խաշտիր ախպարը կ'ըսէա.

— Խաղը պաշայէցլաբ (սկսիլ):

Մոնչիկը կը պաշային:

Մէյ մը զարկիք, լրիկւ* զարկ* տէ
Փարտէօն, փարտէօն,
Փարտէօն, փարտէօն (ներողութին)...

ՀՐԱԶԵԱՑ 8. ԱՅԱԽՆԱՆ

1. Ծածկաբանութեան եղանակ մը. կը կազ-
մուկի իւրաքանչիւր վանկին ձայնաւորին քով
աւելցընելով ինչ և յետոյ նոյն վանկին ձայ-
նաւորը. ծո ա ծոխօս. Ուրեմն վերի ծածկա-
բանութինը կը նշանակէ — ծո մանչիք, չօր
(ուժով) եէծ մը քաշի՞նք:

Նոյն եղանակով և կէ կամ պէ. մասնիկնե-
րով կը կազմուին յաջորդները՝ որոնց նշանա-
կութիւնն է.

Մէնք մէր փայը (բաժէն) առինք. թօղ տուր,
թօղ իւսն (երթան):

Աս մարդիկը կ'երթան մարդու կ'ըսէն:



ՍՈՒՐՃԱՆԴԱԿ ԲԱԶՄԱՎԻՊԻԳԻ

ՆՈՐ ՀԱՐՑՄՈՒՆՔ

1. ՀԱՅ ԳՐԻՏԱՆՈՒԵԱՑ ՀՈՎԵԿՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ

ՆԱԽԱԿԱՆ ՏԱՐԱՉԱՆ

Անտարակյս, ինչպէս միմակ, ոյժպէս ալ հիմ
ժամամակիթերը, կ'որոշուէր մեր ազգին եկղեն-
ցակամ զամ աշխարհիկ մարդոցմէ իրեմ ար-
տափիմ տարագով եւս: Ադր, հոգեորակամթե-
րու յատուկ այդ տարագօ արդեօք միշտ ամ-
փոփոխ մնացած է միմչեւ ցարդ, թէ ցար ժա-
մանակաց եւ համգամանաց այլեւայլ փոփո-
խութիւններ կըր է: Բ. Կը զիտուի՞ արդեօք
ի սկզբամ ի՞նչ ծեւ ունէր այդ տարագօ, յա-
տուկ ազգայի՞ն էր, — գոտէշ ըրմերու զգես-
տուց ծեմ՝ յետոյ քրիստոնեայ քահանայից յատ-
կացուած, ինչպէս եղեր եմ ինչ ինչ թեթամոս
սովորութիւնք, — թէ յոթերէ՞ն կամ ատորի
մերէ՞ն փոխ առթուած:

2. ՎՐԱՑ ՄԱՑԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆ

Վկրը եւ հայք, այմասի մարձաւորք իրերաց
սովարիով, լեզուով եւ որից շատ պատմակամ
եւ գրակամ տեսութեամբք, ութեմալով յանակ
իրերաց հիտ փոփոխակի մթիրարութերը, գրա-
կամ մրցութիւնները, եւ այլի, չտայցեր եմ միշտ
մթութեամ մերքեւ ծածկել միմ միտոյդ պար-
ծաբթերը, գրակամ արգիմթերը, աւամդակամ
զոյցները, եւ կամ իրերաց ծեռքէ խել զա-
նոմք: Եւ որոշիմես հայցոս մեծամասմութեամ
համար, ամմատչիի է վրաց լեզուն, ոյժպէս
ամմատչիի եղեր է նաև նոցա հիմ եւ նոր մն-
տեմազբութիւնն: Արդ փափաքիի էր որ ծեռմ-
իաս եւ ըմբումակ ամծիմք սակաւիկ մի լոյս

տաղիթ մեզ այս մասին. եւ, ի մասմատորի, կովկասու ազգային բաժանութիւնները չ փոխաթափ թարգմանութիւնները ըմբու գաղիքերմէ, որ հասարակաց մատուցիլ իջու մ'է արդէմ, վրացերենէ թարգմանութիւնները ըմբուզ, իմշակէն կ'ըմբ ռուսերմէ, ծածոթացմէիմ մեզ նոցա թէ մին եւ թէ նոր մատեմազրութիւնը.



ՊԱՏԱՍԽԱՆԻՔ

ԲԱԶՄԱՎԻԳԻ ՍՈՒՐՃԱՆԴԱԿԻՆ

(Շար. և վերջ. տես յէջ 42)

1. ԳՐԱԲԱՐԵ ԵՒ ԱՌԱՐՀԱՆԱՐԻ ԽԵԴԻՐ

(Գ. Պատասխան յուղիսի (1897) սուրճանդակի երրորդ հարցման).

Ո՞մն. — Բայց ս շիածափի թէ մենք կը պնդենք այժմ ամէն ինչ գրաբար զրել. մենք համոզակից ենք Պր. իսրայելեանի». (անդ, 188, ա, 3). մեր ըսածն այ է՝ թէ պէտք է հին լեզուն ալ « նոր լեզուի հետ գործածել ի գործեան ». (անդ, 185, թ, 48), այնպէս՝ որ օրէնք հաստատի՝ « աշխարհաբար շարադրուելու ասորեայ գրուածները, և զրաբար զանոնք՝ որ ամեն դարձաց մէջ գործածելի պիտի լինին... Այս էւս Պր. իսրայելեան ատելի պարզած է ». (անդ, 188, ա, 35-44) :

ԲԱԼԱՏԱԿԻ. — Այդ մասին կը ժամանակաւ պիմ ուրեմն Պր. իսրայելեանի ատելի պարզածը իւր բերենք լսել, և ոչ միշտը զրաբար, և այնպէս երկու քնուդ մէկէն դաստախանել՝ եթէ համոզակից էց իւրառ հետ ըստ ամենային:

Իսրայելեան. — Օ Մեր համոզումն այս է... թէ պէտք է ասորեայ գրուածները շարագրել նորով, և զանոնք՝ որ ամէն

դարձաց մէջ գործածելի պիտի լինին՝ շարած զել հոսի՝ — Այս երկրորդ կարգի գրուածներն եթէ նորով լինին՝ յետ քանի մի հարիւրեակի տարիներուա՝ երբ կը մեռնի արդի լիզուն և աեղի կու տայ այլում կամ այլոց, այդ գրուածը թէ անախորժ պիտի լինին և թէ իրենց գործածութիւնը գժամարին։ — Եթէ ընալինը այս կարծիքը՝ թէ ամէն դար իւր լիզուով պիտի զրէ, պշտենեանարար հարկատը գրութիւնը հասկանը համար՝ ժամանակա պէտք պիտի լինին՝ անցած իւրաքանչիւր զարուց մի մի քերականութիւնն և բատարան յօրինել և ուսուցանել՝ Այս անպատենութենէն ազատելու համար՝ պատշաճ կը կործենը այլպիսի երկասիրութիւնը շարագրել հին լիզուով, զոր մինչեւ ցայծը ամէն դար համոզեցի և և պիտի համականայ պատուետե ևս, զի մեր հին մատենազրութեան հետ միշտ պիտի յարատեէ անոր ուսումն ալ » (անդ, 82, թ, 1-24)։

ԲԱԼԱՏԱԿԻ. — Ուժինն զուք, պարունակը, գործեան ենթակայ եղաղ բովանդակի իսաց գրաց եղած և լինելիք հաստարակութիւնները երկու տեսակ գրուածոց կ ամենափէք, այնին՝ ասորեայ և ոչ-ասորեայ (կամ ինչպէս զուք կը բացարելը մշտենեանարար հարկատը գրուածը բաելով). բայց չէք պարզած թէ ինչ կը հասկընաց ընդհակառակին ասորեայ գրուածը անուամը։ Այսուշտ այդ տեսակ գրութիւնները չէք ամփոփած միայն օրացոյցներու, խանութի կամ ասեւստրական ժամանակագրերու, օրագրաց երրորդ ու չորրորդ էջերու մէջ հրատարակուած յայտարարագրերու, յանձնարարագրերու, խոստագրերու և այլն, և այն, կամ զանազան օրենսդրական իշխանութեանց առամանաւ կեայ և փոփոխական հրամաններու, և կամ թատերաց մէջ ներկայացուելիք զաւշտներու, առանձնափակ շըմանակին մէջ, որոնց խսկապէս ասորեայ կրնան ըսուիլ. վասն զի առ սոնց և նմաններէ դուրս եղած գրութիւնը կը վերաբերին մարդկային ծանօթութեանց կամ օգտակար գիտական կամ մէկ և

կամ միւս ճիշդին, և կարող են մշտեցնեաւ բար հարկաւոր ըստվէլ և լինել: Ամէն մարդ որ իւր մէկ համոզւմը կամ՝ մտածութիւնը օգտաւէտ զատի գրաթեան ձեռքսի հազոր զելու իւր նմանեաց՝ ի հարկէ կը փափաքի կամ՝ կ'ենթապրէ որ նցյնը օգտաւէտ լինի ոչ միայն ատորեայ կերպով, այլ նաև մշտըն չենառարարութ, ոչ միայն ապագային, այլ նաև ներկային, ոչ միայն խոսք մի մարդկանց, այլ նաև ընդհանուրին: Բայց որովհեան այդ ընդհանուրին և ներկայան չեն կառող հասկնալ և օգտովիլ իւր գրութենէն եթէ գրաբար լեզուվ լինի, ուստի հարկ է որ նաև այդ իւր մշտեցնեարար հարկաւոր լինելիք գրածը՝ ժողովրդեան հասկնալի լեզույի գրէ, այսինքն աշխարհարար լեզուով:

Բայց կրնան լինել մարգիկ՝ որք իրենց նպատակ չունենան հասկցուելու ընդհանուր ժողովրդենէն, այլ գուն լինին մասնական մերու և կամ խոսք մի մարզկանց հասկացողութեամբ: Այզպիսիք, այս՝ կարող են (առանց ուղղամտութեան դէմ զործելու) գրել գրաբար լեզուով: Բայց մենց իրաւունց շունիք քանակաւելու որ ամէն մարդ այդ աեակ մարդկանց գոհ եղածովը գոհ ըլլայ, և գրաբար զրէ:

Ուստի ուղիղ կը լինի՝ եթէ զուց գրաբար և աշխարհարար զելու մասին ձեր զազափարը ձևափոխէք հետեւել նախազառութեամբ, որուն ես ալ իմ հաստատական ստորագրութիւնն կը գրոյմեմ: « Ովկ կը փափաքի իւր զրուածը, ժողովրդեան չնդիաներութեան կամ հասարակաց հասկանալի ընել՝ պէտք է որ աշխարհարար գրէ, իոկ ով որ գոհ կը մնայ իւր զրուածը ժողովրդեան մասնահմերի մը միայն և կամ ատամեցնականաց հասկանալի ընելն՝ ազատ է գրաբար գրելու»: — Այս է միակ ճանապարհը որոյ մէջ կարող պլափի լինինք համաձայն քալել, առաջ թէ ոչ՝ ես իմ ճամբաս բռնեմ և զուց ալ ձերը, որ ինծի համար ծայրը փակ կամ կոյր փողօցի մը կը նմանի, որան բովանդակ երկայնաթիւնը մարդո կտրելին յետոյ շատ ոչ կը տեսնէ որ ելք շունի, և կը ստիպուի զարձեալ կրկին աշխատութիւն կրել և ես դառնալ՝ ուղիղ ճամբաս մը վրայ քալելու:

Հարայշելեան և Համախոնք. — Աւորեմ մեր այսպան երկար բանալինի հետեւթիւնն ինչ եղաւ:

Բանասէկը. — Այս եղաւ՝ որ Ա. Յայանուցան թէ ես զրաբար լեզուն կամ գրաբար գրելը ոչ ծաղրեր եմ, ոչ արհամարեր եմ և ոչ ալ նորա գէմ հակարութիւն ունիմ: — Բ. Զէ կարելի զրաբար լեզուի ուսումը կամ բացարձակ օգտակար համարի ամենուն և կամ բացարձակ վնասակար, այլ օգտակար է յօժարակամ ուսանողաց համար և վնասակար՝ բռնի ուսանողաց: — Գ. Անհրամեցն է թաղական և Միջակ զպրոցներու ծրագրէն զուրս հանել զրաբարի ուսումը և սեփականել միայն բարձրագոյն վարժարաններու ծրագրին: — Դ. Գրաբարը ընդհանուր պարտաւորիչ ընելու ջանցն՝ վնասակար է նոյն խոկ զրաբարի զարգացման, բացի այն վնասէն՝ զոր պիտի կրեն ուսանողք և ուսուցիչը և հասարակութիւնն: — Ե. Իրաց ընդհանուր չնժամացընին և ժամանակին յեղափոխական օրինաց հակասակ է զրաբարը հասարակաց խօսելու և կամ զրելու լեզու ընելիք: — Զ. Գրաբարը բոլորովին անհամականի է ժողովրդեան ընդհանուրթեան, և Միիթարեանց ու նմանեաց զրաբար զրութիւնը ուսումնականաց համար միայն օգտակար եղաւ են ուղղակի և ոչ ժողովրդեան ընդհանուրթեան: — Է. կրօնական քոր և պաշտամանց լեզուն պէտք է մնայ զրաբարը, բայց բանաւոր չէ կրօնական տեսակետին միայն բռնական զօղովարը զրաբար հասկընալու և զրելու: — Ը. Գրաբարէ աշխարհարար եղաւ եղած և լինելիք թարգմանութեանց պակասութիւններուն կամ անկասարութիւնն անկարելութեան չեան հետեւ, չորինաւորութեան և անտեսութեան հետեւ կապ չունին, այլ կը ցուցընեն թէ աւելի խնամբի և աւելի քաջալվարը ձեռքի կարօտ են: — Թ. Գրաբարը պէտք է շատ ուսուցուի թարգմանութեան վարժարանաց մէջ, ուսկից զուրս ելլող աշակերտաց ամենէն աւելի յետադիմն ալ պէտք է գէր ամենասպարդ զրաբարն անսխակ հասկընալու: ԱՌ. Խմբագրութեան և օրագրութեան պաշտօն կատարողներէ զրաբար լեզուի ամելի հրման ուր զիստիթիւն կը պահանջուի, բայց աշ

գէպ ի զրտորար ձկտութե լեղուի . — ԺԱ. Գրտոթեան ասպարէցը այժմ միայն արեւելեան և արեւմտեան զաւառարարաններու ձեռքը լինելով, միւս զաւառական խօսուածները՝ իրենց զրոժիննը պէտք է յարմարցը-նեն կամ արեւելեանին և կամ արեւմտեանին ոճյուն . — ԺԱ. Ժողովրդեան ընդհանուրութեան համար համարկութիւնը զրոժանները հարկ է որ լինին աշխարհաբար լեզուլ, խկ միայն ուսուամեականաց համար զրոժանները կրնան նաև զրաբար զրոյիլ, Նեղինակին ազատ կամաց համեմատ :

Յորդանանամեանա: — Սակայն այդ ամէն ցուցմունքներով հանդերձ՝ « ես համզուած եմ թէ զրտորար լեզուն մի օր պարսաւորիչ առարկայ պիտի լինի ամեն հայ վարժարանաց և զարցներու մէջ ». (անդ, 397, ա, 36-40) :

Բանասէր. — Դուք իրաւանց մէջ էք, պարոն, այդ ձեր պարզամիտ համզուած՝ որ ընաւ մէկուն վասա չի բերեր՝ շարունակի նաև այսուհետեւ, և միշտ աշ սպասել այդ ձեր մեսիայական օրուան, յօրում ձեր հաւմուման յաղթահակը կատարէք հասարակաց ողդամութիւնը ձեզ հետ միացած տեսնելով . . . Այս այժմ պիտիս չէ . . . Քանի որ ձեր մեղապարատ զատած բանասէրը գքը տեսական վարդապետութեան մէջ ընդհանուր հայ հասարակութեանն զատապարտիլ չէ : Տեսնենք այժմ զործնականին մէջ :

Բ.

Բանասէրը դատապարտեիլ է իբրև վարիչ ազգային եռակարգ վարժարանաց :

Այս մասին մէջ բարեբախտաբար ոչ վիճելու և ոչ աշ երկար գիշելու պէտք կայ, քանի որ զիմաց ոչ հակառակորդ ունին զետեւ, և ոչ աշ գիշելիքներու տեսական կերպով է, որ այսպիս կամ այնպին կարենայ քաշը բաւկիւլի : Խմ նապասակը է ուրեմն համառօս՝ բայց բատկարելուն որոշ ծրագիր մ'առաջարկել հայերէն յեղուքի ուսամեւ, միսեալ ծաղկոցներէ մինչև մասնագիտական ընթացքի աւարտումը .

և այդ ծրագիրը առաջարկել ոչ իբր կատարելութեան-տիպար մը, այլ բարեփոփոխութիւններ կերպից՝ եթէ բանիբուն և փորձառու անձինք համին ձևակերպուելիք մասերը ցոյց տալ մեղի . որպէս զի մենք ալ ըստ այնմ զործնական կերպով սկսինք յօրինել և հրատարակել այդ ծրագրի զործապուլեթեան համար հարկաւոր եղած դասագրքերը, առանց որոց ծրագիրը՝ որչափ ալ ընտիր լինին՝ օդեւզէն աշտարակներ կը դառնան :

Խմ նպատակիս դուրս է՝ խօսիլ այստեղ ազգային լիդուն ուսուցանելու այս կամ այն կերպին և ոճին վրայ, որտեսք աելի կամ պակաս վիրաթեամբ կրնան մի և նոյն նպատակին հասցնել :

Ընաւասիկ ուրեմն իմ վարչութեանս ներքի գտնուող եռակարգ ուսումնարանաց հայերենին ուսուցման ծրագիրը :

1. Կ'ենթավարիմ թէ անհրաժեշտ է գէթ երեց տարի նորածին մը թողուզ իւր մօըը խնամոց ներքեւ, և թէ այդ շրջանին մէջ արդէն տղան կը սկսի թողովիւլ հայերէն՝ մանկակուն բառերու շարբ մը, և իր ամենազարդ կարօտութիւնները և զացումները հաղորդէ :

2. Մանուկ մի իւր շորբորդ տարեկան շրջանին մէջ կրնայ աւանդուիլ նավլուցներու խնամիքին, որուն ընթացքը լինի երեք տարի (4-6 տարեկան տղայք). Հետեւել ծրագրով :

Առաջին Տարի. — Ընթաելի բառերու ուսումն, շորս կողմը գտնուած ամենասովոլարական նիմիթոց, միշտ նիմիթակս իրականին վայ ցոյց տալով. (օր. արեւ, լուսին, աստղ և նմանիք, — շոն, կատու, հաս, ձի և նմանիք, — ջոր, աղրիւր, գետ, ծով, քամի և նմանիք, — աթռու, սեղան, պնակ, տախտակ, զղալ և նմանիք, — հաց, միս, պանիք, գինի, իւղ և նմանիք, և այլն, և այլն) :

Երրորդ Տարի. — Սովորական բառերու ուսումն, սկսելով տան մէջ գտնուած իրերէն՝ անցնի փողոցի, շուշկայի, թթութեան, և այլն, մէջ գտնուածներուն, առաջիններուն ոճով :

Երրորդ Տարի. — Խօսակցութեան բառերու ուսումն, և պիտի առապէս ժամանակի,

շափի, կշխսի և աժտական բառեր, և ընտառական լեզուի մէջ յաճախած բայցեր, (զօր, սիրել, ուզել, տալ, դալ, երթալ, բերել, դարնել, վագել, և այլն, և այլն):

Այս ամէնը պէտք է ուսուցուի ոչ թէ վարդապետորէն (դասի ոճով), այլ ասլորաբար ժաղկոցներու մէջ ի գործ գրուած գրօսահաց ոճով, մի և նոյն ատեն ջանալով որ ազան կարենայ բառ բառի հետ կապել և գէթ թերի կերպով իր միտքը բացատրել:

3. Նախակրթարանի ուսումը կը սահմանեմ երկու տարրան շրջանով (7-8 տարեկան տղայք), որոց Առաջին Տարրոյն մէջ պիտի սորվեցուին ուսումն ջանարք ձանձնալու դուռ, Պարզ և բաղաձայն նշանները քովի քով հնակու, բառերը կարդալու և առանքը գրելու: Երկրորդ Տարրոյն մէջ պէտք է սովորին որ և յիշ բառ կարգալու որ գրել, պարզ բռաւշշաները գրել ու կարգալ, և իրագիտորիշներն ամենապարզ նիմիոց:

4. Թաղական կամ Նախական կամ Տարրական զպրոցի շրջանը չորս տարիներու կը բաժանեմ (9-12 տարեկան աղայք), հետեւալ ուսումներով.

Ա. Տարի. — Ընթերցումն, զիր, հատուած կամ բերանացի սերսել ամենապարզ և կարճ զուարճալի մանկական նիմիութեր, աշխարհաբար քերականութիւնն մայրենի լեզուի (եղակի, յոքնակի, — ածական, դրյական, — յատուկ և հասարակ անուն) և հրահանդք, իրազիտութիւն համեմատաբար բարձրագոյն աստիճանի իրաց:

Բ. Տարի. — Ընթերցումն, զիր, հատուած, քերականութիւն (թուական անուններ կարգալ ու գրել, հոլով և հոլովումն զյական և ածական անուան, դերանուններ) և հրահանդք:

Գ. Տարի. — զիր, բերանացի ընտանի և զուարճալի մէպիկներ պատմել տալ, քերականութիւն (բայց, մակրայ, շաղկապ, ձայնարկութիւն), հրահանդք, քերականական լուծմանը, ուղղագրութիւնն պարզ բառից, հատուած բնափր աշխարհաբար արձակ մատենապիրներէ:

Դ. Տարի. — Քերականութիւն (ինպրառութիւնք բայցից, իմասա փոխող ինկրառու-

թիւնք, հոմանիշ բառեր), հրահանդք, տրամաբանական լուծմանը ուղղագրութիւն զըս ժուարին և նմանաձայն բառից և հատուած ընափր աշխարհաբար քերթուածներէ:

5. Մլուսակ վարժարանի կամ Գիմնասիլնի շրջանը նմանապէս չորս տարիներու կը վերածեմ (4-3-4-6 տարեկան պատանեակը), հետեւալ դասերու նիմիութրով.

Ա. Տարի. — Քերականութեան), աշխարհաբար լեզուով տաղաջափութեան կանոններ ու գրունական ճաշակ մը տալ, ուղղագրութիւն խստապահանջ նաև ամենամանր զիտելեաց, պատմութիւն ազգային հին մատենապրութեան (ընդհանուր զիտելիք: Դ և Ե դարեր):

Բ. Տարի. — Գրութիւն ընտանեկան բազմաեսակ նամակներու, վեպիկներու, տապաներու, և այլն. — Պատմ. ազգ. հին մատենապրութեան (Զ. է. լ. թ. ժ. ժ. դարեր):

Գ. Տարի. — Գրութիւն ընտանեկան և պարզ պատմութեանց + նկարագրութիւններ. — օսար լեզուներէ ամենապարհետ աշխարհաբար թարգմանութիւնը, պատմութիւնն ազգ. մատենապրութեան (Ժ. Ժ. Ժ. դարեր):

Դ. Տարի. — Գրութիւն առեւտրական նամակներու, հաշիւներու. — օսար լեզուներէ թարգմանութիւննք. — պատմ. ազգային նոր մատենապրութեան (Ժ. Ժ. Ժ. դարեր):

Զ. Բարձրագոյն վարժարանի կամ շիկունի շրջանպէս չորս տարի կը սահմանեմ (17-20 տարեկան պատանիք), հետեւալ ուսումներով.

Ա. Տարի. — Գրաբար լեզուի քերականութիւնն վարդապետական և զործնական (հրահանգօք) մինչեւ բայցը. — թարգմանութիւնք զասական և լուծերցումն նոցին և մատենապահական լեզուական անկրաքարձութիւնք + գրաբարի սեփական ոճեր զասական հեղինակաց:

Բ. Տարի. — Գրաբարի քերակ. վարդապետական և զործնական (հրահանգօք) մինչեւ վերջը. — թարգմանութիւնք զասական հեղինակաց, լուծերցումն նոցին և մատենապահական լեզուական անկրաքարձութիւնք + գրաբարի սեփական ոճեր զասական հեղինակաց:

Գ. Տարի. — Զեք քերականականք, տառազափութիւն (գարդապետական). թարգմա-

նոթին և ուսումն (յեզուական-քննադատութիւն) իրթին և հելլենարան ու ասորաբան, և այն, հեղինակաց :

Դ. Տարի. — Պատմական և նկարագրական պարզագոյն շարադրութիւնը դրաբարի. — Աշխարհաբար լեզուով գրելիք թղթակացութիւնը և յօդաւածը, և այն, օրագրաց և ուսումնաթերթից, և այն :

Ա.յո շրջանին մէջ կ'ենթալլեմ որ կատարուի նաև. ընդհանուր դրականական-ձարտառանական ընթացքն՝ հայերէն շեզուով:

Ե. Ասմանագիտական ընթացքը կը սահմանեմ երկու ատրաց շրջանի, հետեւալ կերպով:

Ա. Տարի. — Գրաբար շարադրութիւնը դանազան տեսակ նիմոց վրայ (մատենագրական, ուսումնական, Պատմական, բեմական, ներրողեան, և այն, և այն). — Գրաբար թարգմ. յօտար լեզուներէ (հին և նոր լեզուներէ). — տաղաչափական զրութիւնը, բառագիտութիւն (կազմութիւն բարից, աժանցում, բարպաթիւն, յատկութիւնը, և այն):

Բ. Տարի. — Պատմ. զրաբար լեզուի և ուսումն զարաց ի զար փոխմանց. — Ուսումն նշանաւոր մատենագրաց ոնց սեփականութեան. — Տեղիկութիւն և զրութիւնը լեզուական ինդորց վրայ. — Բաղդատական և ընդհանուր լեզուազիտական նախածանօթութիւն. — Հայերէն շեզուի մասին օստարազի և մերազի լեզուազիտաց ակտութեանց սւսումք :

Այս է ահաւասիկ այն ծրագիրը դոր ես կ'սուածը իւն հայերէն իւղուի ուսուցման մասին, և կը սպասեմ Հասարակութեան դատադրութեանց և յատկապէս նաև իմ հակառակորդաց խարայեան - ՌՄն - Յորդանա - Ենակեան եռանձնաւորութեան խորհրդածութեանց, պակասը լրացնելու և աւելորդը յաղաւելու համար, և լսելու թանասիրի արդարացուցման կամ դատապարտեան վրձիսենք:

Բ.Ա.Ն Ա.Ս Լ Ր

*** *

2. ԳՐԱԸՆԻ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԽՆԴՐ

(Ե պատասխան (1897) յանուար ամաց Առարհանդակին երրորդ հարցման):

Բայց Այս նոյեմբերի սուրհանգակին մէջ կարդացի Բանասիրէն՝ իրը պատասխանի իմ եւ այց տողից իւր առաջին հատուածին գէմ՝ երիրորդ մի, որով կը փորձէ ջատագովել իւր նախորդը եւ այնոր մէջ յայտնած

* Բաղմակիպէն գեկեմքերի պրակին մէջ խօսելով վերայ բարին ուղղագրութեան մասին, ցացած կարծեցի անտեղութիւնը զատակը յապաւելու դրութեան: Նոյն այդ անտեղութեանէն խուռափելու համար՝ ինձ պատշաճ կը թուէր, ինչպէս կը փորձեմ հոռ, զրել եւս այսոր՝ այսոր՝ այսոց, այդոր՝ այսոց եղ. սեռ չեն, այլ տանել զաց ձեւերէն, այսոր-իկ՝ այսոց-իկ՝ այսոց-իկ, այդոր-իկ եւ այն, (հմտուած այսոր՝ այսոր՝ այսոր եւ այլ ձեւոց վերայ յաւել. իի): Զի ինչպէս թարձը եւ ռամփկ է աս, պդ, ան, այլ կ'ըսեմք այս եւ այն, այսպէս եւ սեռ. այսոր, եւ ոչ ասոր եւ այն: — Դարձեալ էրը ընտիր կը նեմք իր, եւ ոչ իր, հետեւարար պատաշան հարզվել իւր-եան, իւր-եանց, եւ ոչ իր-են, իր-ենց. Առաջարկած ձեւերը արդէն նախնական ռամփենին եւ մասամբ արդի գաւառական բարելասց սովորական են, ինչպէս յայտնի է տեղիկաց. եւ մնաւ տղել չեն հնչել կանոնաւորութիւնը եւ նոյն իսկ քաջցրաձայնութիւն սիրու ականջաց: — Դարձեալ՝ ապանոյն մեռած պիտի կցորդը (որ է քոր պիտի, պիտէր բայն) կենդանացներով՝ իրք բայց գործածել, զոր որ պիտիմ, ահա իի, իմքը, իից, իին զաւ, եւ ոչ թէ պիտի զամ, զամ, զայ, եւ այն: (Քորց մէջ թէ զիմազուրկ է պիտի եւ թէ զիմասուր): Քան զայժմուս կանանաւոր է եւ աշխի. զիմազուրկն, պիտի որ կամ պիտ' որ գամ: — Այս եւ այսպիսի բանաւոր եւ ընտիր ձեւեր եթէ գործածական դառնան ինոր լեզուի, այսոր եւ նոյն մէջ մի քայլ միայն պիտի թաւը, եւ հընն այլ անաշխատ հասկանալիք զառնան:

համոզմննքը : Այդ գեռ շարայարելի է , թուի յընթացս բոլոր ներկայ տարւոյս : Եւ որովհետեւ այդ տուաշխն մասնէն ինձ յայտնի է յաջորդաց բոլմանգակութիւնն այլ , ուսափ կը փութամ ինըրել սուրճանգակէն՝ որ ի պատասխանի այլոր վերասին սպազրէ իմ նախորդն՝ առանց ո եւ է փոփօխութեան :

Կարգացի հատուած մ'այլ գեկեմբերի մէջ ի Գրիգորէ Բայասեանց , որ էր զրեթէ թանասորի արձագանցը : Լորեւոր կը համարիմ իմ նախորդս վերայ , — զոր անզամ մի եւս իւր յամար տպագրելու պէտքը կը տեսնեմ , — յաելուզ քանի մի խօսք :

Ըստ որում նախնեաց լեզուի զէմ լարուած նորաձեւ եւ հակագրական պատերազմն առանց հակասութեանց չկարէ լինել , ահա տեսէք՝ ի՞նչ կըսէ Բալասեանցը : Կ'ընդունի նա՞ թէ ու ուսահայ եւ տանձկանց բարբառները շատ անզամ մէկը միասի համար զրաբարից էլ աւելի զդուարը մբանելի է ո . Եւ հարկաւոր կը կարծէ « միակերպել » զայնոք եւ սաեղծել այնոց մէջ « օրէնդրական ճանապարհով մի անքականը միտթիւն » թէ խօսդաց եւ թէ զրոդաց համար :

Այդ ինդիրը զատելի է : Առաջինն , որ է միակերպ « խօսել » , անհնար է եւ բռն իսկ « յեղափօխական օրէնքների զէմ » : Եթէ « Բանասէրն ամենայն իրաւամբ զրում է թէ ժողովորդն ուզածին պէս իւր տաեղծած լեզուի ծնունդը զարուց ի դարս կրնայ փսփոխել , անկախ ո՛ եւ է կանոնաց արգելուուններկ » , Բալասեանցն ուստի կ'երացէ այդ « օրէնդրական ճանապարհով անքականը միտթիւնը » գաւառական երկու բարբառոց մէջ : Եւ կը հարցնեմ . « ամենայն իրաւունք » տալը Բանասիրին ընդզէմ « կանոնական արգելմանց » , եւ ապա այնոր հակառակ « օրէնդրական ճանապարհ » առաջարկելն՝ ինքն ինքեան հակասել չէ : Բայց թողումն զայդ : Ապաքէն չէ եղած ազգ մի եւ ոչ ժամանակ մի՛ յորում ամենայն զաւուք իրենց սեփական լեզուն չունենան շատ կամ սակաւ զանազանութեամբ ի միմեանց . նոյն իսկ մեր ազգն արգէն ո զարուն ուստի

եւ քան զայն շատ յառաջ՝ ունէր իւր պէս պէս բարբառները , (Կորին , յէլ 42) : Ուրեմն Բալասեանցը պէտք է համոզուի՝ թէ բացրձակապէս անկարելի է — զէթ երկու բարբառները խօսողաց մեծամասնութեան — իւր փափաքը մի լեզուով խօսելու : Եթէ մինչեւ անզամ յաջորդի այլպահէ բռնի միութին մի , ի մօտյ զարձեալ պէտին հերձել զայնոք « յեղափօխական օրէնք » :

Բայց հնար է եւ կարեւոր իսկ՝ ինչպէս ցոյցինց անցեալ անզամ՝ միով « գրել ո , փակելով զայն « օրէնդրական ճանապարհի » մէջ , որպէս շատ զարեր վարեցան մեր նախարարութեան մէջ կը զրաբար լեզուով : Եւ երբ փորձեմք այս կամ այն զաւառականով կամ . նորակազմով զրել , ինչպէս կ'ուզէ Բալասեանցը , հարկաւ այց լեզուն գեռ անմանալիք պիսի մամալ այն բոլորին՝ որք ուրիշ բարբառով կամ բարբառներով կը խօսին , եւ կամ ամէն զաւառք պիտին աշխատալի համանալ զայն : Համարիմ թէ վերջապէս համակացան : Այժմ հետեւեալ հարցումն կը ծագի մեր մոտաց մէջ . եթէ այդ ճանապարհով ազգին ածենամեծ մասն պիտի զրել եւ կարգուլ լեզուով մի զոր չխօսի , այն է ունենալ մի եռոր գրաբար , — պայսէս աշխարհաբարեանք , կը ստիպագին խօսավանել պէտքը զատ զարական (թէ եւ անխօս) լեզուի , — եւ այդ բանն « իրերի բնական ընթացքին հակառակ » չէ , ինչո՞ւ ապա սովորութիւնը նախին զրաբար լեզուի , որ կրնայ նոյն այդ նոր զրաբարի ճանապարհով ինքն այլ կենդանանալ գրականութեան մէջ եւ հասկանալիք զառնալ բոլորին , « իրերի բնական ընթացքին հակառակ » կը համարուի . Երկու պայմանի մէջ այլ հաւասարապէս արուեստ եւ աշխատութիւն չե՞ն մտներ : Դարձեալ՝ եթէ բարբառները միացնելով , առսահայն իւր պյու ձեւը՝ զոր օրինակ՝ « առում եմ վասակին » , պիսի փոխել ըստ տաճկահային « կ'ատեմ վասակը » , կամ թէ սա ուսահային հետեւել , մին կամ միւսն ընդունելով ձեւեր զոր յառաջ լուսեին , ինչո՞ւ զորա նոյն զրութեամբ վկարողնան ըսել նա եւ զրք . « ատեմ զվասակ » , որ քան զաւառահայինն աւելի՝ մօտ է տաճկահային , եւ ուսահային այնչափ հեռի՝ որչափ

տաճկանայինն է : Եթէ օրինաւոր է իրարու համար և զբարպից էլ աւելի զգուարը մրածեցի « լեզուներ իրարու հեռ զօղել եւ զրել, թշնամ ուրեմն կը հաւածուի այդ հաւեմատար աւելի դիմումանեւի զբարպին ոչ միայն զուս գործածութիւնն , այլ շատերէն եւ խառնումն իսկ զբարպ աշխարհաբարպի հետ :

Այս բացարարութիւնը՝ թէ զբարպը և դարուս շրաւառութեան ոզու եւ պահանջների համեմատ չէ , զբարպն և յեղափական որէնքների դէմ է , զբարպն « իրերի բնական ընթացքի հակառակ է » եւ այլն , աշխարհաբարպեանց բերանի մէջ անիմաստ բանաձեւեր զարձած՝ ստէպ կը կրինուին թութակորէն անդիտակացարար : Ու լուսամիտք , ըսէք մեզ . քան զձեզ յառաջ ապրած հայր՝ որը աշխարհաբար խօսեցան եւ զբարպ գրեցին տան զար , (արարատեանց աւելի կանուին և դարէն) , խաւարի մէջ թափառեցան ; բնութեան հակառակ զնացին . Նորա եւ ձեզ նման մարզի էին , ինչպէս կը կարծուի բնութիւնն ինչնէ շենքադրեց նոցա որ ամէն զարու մէջ մի նոր զբարու լեզու ստեղծեն , թողլալ ի բաց սկզբնակնը * . բնութիւնն իր օրինաց եւ ընթացից զաղանիքը բանասիրաց եւ բաշասեանց միայն յայնեց : Զափազնաց յանձնապաստանութիւն . Ոչ , աեւարք . պէտք է խստովանել՝ թէ ձեր համոզմունք իրեւ զուս տեսութիւն իս-

պար անհիմն են . իսկ մերոց գործադրութեան համար միայն կամք կը խնդրուի :

Դիտողութիւն մի :

Մեր օրեր ապել սովորութիւն մի ելաւ , առմկամութեանէ կամ թերեւս անկարողութենէ յառաջ եկած . կը հրատարակուին նախնաց գործիւնց կամ թարգմանութիւնց հին լեզուով , եւ այնոց յառաջաբան կամ ծանօթութիւնը կը զրուին նոր լեզուով , հակառակ ցարդ եղած սովորութեան միջիթարեանց եւ այլ բանասիրաց : Երկու բարբառ մի մատենի մէջ՝ կը նմանի « ըզէիոյ պարանոց ի մարգիւղէն զօգել զըլուի » ըստ նմանութեան Որատեայ : Հրատարակիչը պարաին մասեծ՝ թէ այդպիսի գործոց ընթերցողք զբարպ բնագիրը կամ կը հասկան կամ ոչ . եթէ կը հասկանան , ապա կը ըրբանեն նա եւ այնոց յաւելուածները՝ երբ զբարպ լինին . իսկ որք բնագիրը չեն հասկանար , նոցա համար յաւելուածոց ընթերցումն այլ աւելլորդ է : Եւ արգէն ոչ է՝ որ նեսաքրըրի գնչ այդպիսի գասական մատենագրական զորենը , եւ շնականայ զրաբար : Իսկ նախնեաց մատենագրութեանց վերայ լոկ հարեւանցի տեղեկութիւն մի ստանայ ցանկացողք փոխանակ զայնոց զատ զներու եւ կարգալու , բաւական կը համարին զիմել մի մատենագիտութեան , որպէս մէջ զննեն այնոց բոլորին վերայ ծանօթութիւններ :

* ԺԱՌ- զարերէն սկսան ումանք աշխարհաբար եւս զբել ուղաց եւ ուամինի վերըբերեալ դորձերը , զոր օրինակ՝ առաքի նարհաւույն , դիրք գաստակաց , բժշկաբանք եւ այլ նմանիք , որով ընթերցուզք դիւրաւ զոտուին : Իսկ պարզ զբարպով մի զրել շարուանակեցին կրօնական , պատմական , քերթողական եւ այլ զորձերը : Այս համեմատ է մեր անցեալ անգամ յաշնած համոզման՝ նոր լեզուով շարադրելու առօրեայ զոււանները . լարգէք , զասակիք համբականք , կենցաղականք (բնապանականք) , առուեստականք եւ այլք ի գործածութիւն սամկին) . եւ հնոզ զայնոք լուս յամենայն դարս պիտին զործածել սուսանմականք միայն , որպիսիք են նախայիշեալ զբարպքն առ նախնիք :

Որի՞ւ ագեղութիւն մ'այլ : Աստի երեսուն , վաթուուն եւ այլ տարիներ յառաջ զրուած եւ տպուած աշխարհաբար ստէպ զործածուած երկեր այսօր զերստին կը տպագրին անփոփոխ նոյն հին լեզուով : Փափաքիլ էր՝ որ աւանդապահ տպագրիչը հասկանային , թէ այնոց ծերեալ կամ յոյժ ուամիկ եւ այլազդի բառք եւ սասցուածք , եւ կոշա ուղղագրութիւնը , որք արդի զափանութեան մէջ անզործելիք են իսխականներ , հեղինակութիւն չունին , — զի հեղինակութիւնն ընդունելիք եւ զործածական լինելու մէջ կը կայանայ , — թէ եւ այնոց զրիչք նշանաւոր լինին իւրեանց համբաւուլ : Ազգը նոցա իմաստները

կ'ուզէ , եւ ոչ այն լեզուներ՝ որովք նոքա իւրեան հետեւելով վարեր են երեմն , եւ ինքն այժմ թողեր է իրը խոտելի . լեզուներ՝ որոց սմանք մինչեւ անգամ անհասկանալի են արդի համբակաց ի զասազիրս եւ յալլս : Արեւը մասախզոյ մէջ ո՞վ կը ցանկայ տեսնել : Մըրազրելով այդպիսի գործեր , զէթ թող համարուէ՝ իրը թէ նոր կը թարգմանուին յօտար լեզուէ կամ հին դրաբարէ : Եւ ծանուցուի եւս հեղինակի լեզուին փոխաւիլը , թէ կ'ուզն՝ ճաշակ մ'այլ աալով այնոր ի յառաջաւ բանի : Թարգմանել՝ կ'ըսեմ . Եղիշէ կամ թուուէտ թարգմանուելով , կր զադարին լինել ինչ որ էին յառաջ : Այս խօսքը , « այն շափ աշխատանք քաշել , բարայ մասրափ ընել ու հարսնիք ընել , անկից էտեւ կնկան կամ էրկան խահրը քաշել , զալին ուղրին այնշափ տէրս քաշել , ինչուան որ հաօրլ թերեն ու մարդ ընեն իրենց զատակը » (Դեղ կենաց) , եւ այլ այսպիսիք , որը բազմաց համար գրաբարէն շատ աելիք անհասկանալի են , եւ խորթքն , ինչպէս « իս ասդիս թողաց , մէկալ աղբարս առաջ անզին տարավ... ասանի գորս ներս ելլալ մտնալիինի » (Վարք սրբոց) եւ այլ նմանից ուզդուելով՝ թարգմանութենէտ տարբեր կամ պական բան եղած կը լինի : Այսոց հեղինակի արդէն ինքեանք կը բողոքէն իւրեանց առ հարկի գործածած լեզուաց

գէմ (վիշբ . Դեղյն կենաց) , եւ այսու զմեր բարոյաւէս կը պարտաւորեն սրբել իւրեանց գործերն այնոցմէ՝ երբ այլ եւս այնոց կարուաթիւն չկայ :

Երրորդ կէտ մ'այլ , Բանասիրական հաշտուածոց եւ զրոց մէջ օտար մատենազրաց վկայութիւնք մէջ կը բերուին հեղինակաց լեզուաք , որի հազին սակաւաց մեր ազգէն ծանոթ են . զզր օրինակ յօնարէն չ լատիներէն , գերմաններէն , ռուսներէն (տաճկանայաց համար) , եւ այլն . — թէ Նոյնակէս զործածուած առածներու գէմ արտունչներ լուսեցան ազգէն՝ յայտնի է : — Այդ բանասիրաց զիւտաւորութիւնն ի՞նչ է . եթէ իւրեանց քաղածներն ամէն ընթերցողաց չհասկացնելն է , զտած են յարմար ճանապարհը , թող յառաջ տանին . իսկ եթէ հասկացնել կ'ուզեն , ինչո՞ւ զայն հայերէն չեն թարգմաներ կամ զէթ երկու լեզուով եւս զրել . քսան լեզուներէ մի բարեւոնական խառնուրդ յօրինելէն ի՞նչ կամ կը զգան : Թերեւէն ի՞ն վնտանիք իւրեանց վերայ անպատճ թարգմանելու . բայց կարծեմ բոլորովին անհասկանալի ընելը մեծազոյն չար է : Ապա թէ ոչ՝ զէթ միայն իմաստը մէջ թերեն , քան թէ ընթերցողաց մեծամասնութեան համար մեռեալ բառերը :

Ո Մ Ն

ՅԱԽՍՌԱԿԱՆ ԲԱՌԵՐ ՈՒՐՄԻՈՑ ՆԻ ՍԱԼՄԱԿՄ ՀԱՅԱՑ

(Մասնական պատասխան յուրիս ամսոյ Առողջապահութան կարգման)

(Տար . տես յէջ 544, 1897)

Բառք

Նշանակութիւնք

Ծելել	Աշորայ , Հաճար . թրք . լավտար :
Հինած	Արգիսոսայն :
Պըննի	Ճակընգեղ :
Ճախարմանուկ	Փաքք թաշնոց տեսակ մը :
Կորմշիկ	Շանաճանճ , նաև Մժեղ :
Մժիկ	Ճանճ :

- | | | | | | | | | | |
|--------------|--------------|------|-----------|------------------------------|-------------------|-------------------|--------------------|--------------------|-----------|
| Հեգուսկ | . | . | . | Աղին, | փակաղակ, | թ. | մանտալ : | | |
| Ծամիշտրան | . | . | . | Աղըլիանց հիւսած | մազին ծայրը | կապած | արծըթէ զարդ: | | |
| կաճախիկ | . | . | . | Մ'ծ | ծիծան : | . | . | | |
| Պէմ, | Բէմ, | Բում | . | . | Բուխճակ : | . | . | | |
| Կշտիբոյր | . | . | . | Հարաբինդիյր, | հարսին | մօտէն | գնացող : | | |
| կանաչկարմիր | . | . | . | Երիածան : | . | . | . | | |
| Շրբիկալ | . | . | . | Որսաւե | երկնից : | . | . | | |
| Բոնոժ | . | . | . | Շերամի | որդին | բնակարանը, | մետաքսեայ | | |
| Ճիճլած | . | . | . | Տնուոր | դ | մազնուա, | նիճար, | հիծեալ : | |
| Քուր | . | . | . | Մ'սով : | . | . | . | | |
| Օրոճ, | Օրոջ | . | . | Յուսովթաւունց | զոր | տղայոց | պուխը կը կապեն աշբ | | |
| | | | | շառնելու | համար : | . | . | | |
| Պլուչել | . | . | . | Երփու | ափի | մէջ խննիք | գնտիիներ շինել : | | |
| Հին, | Խին | . | . | Զգեսա | արանց | բուզի | նման. | թ. | Արքալըք : |
| Ակոիժածա | . | . | . | Հարսին | օծակին | հետ փեսային տունը | տարուած կերակուրը: | | |
| Բիժմաել | . | . | . | Վերջանալ : | . | . | . | | |
| Քամիշտալ, | Քըմիշտալ | . | . | Քծնիլ | շանց : | . | . | | |
| Բաշ | . | . | . | Սխառըի | բայսին | տերկները : | . | | |
| Տօրախ | . | . | . | Սամիթ. | թ. | ոկէնէէ : | . | | |
| Լաբ, | Լախ | . | . | Լիլած, | լիլած | , | թոյլ : | | |
| Պողաճակ, | Պողոշիկ | . | . | Ուռեցց | (մէջ ջար լցուած). | — ուռիլ, | բաշիլ : | | |
| Քարկիճ | . | . | . | Ուռիի | մատերուն | ասկ պինդ կոշտ. | թ. | Աասըք : | |
| Թոռ | Թոռ | . | . | Ականջին | բլթակի | ներքն զանուած | մասը : | | |
| Լիլիկ | . | . | . | Օրորոցի | ազայոց | ջրլաթի | խողովակը. | թ. | սիրպիէ : |
| Կըլիթալ, | Ուռձկալ | . | . | Որկալ, | փիել : | . | . | | |
| Ուռճասակ, | Օրոշկասակ | . | . | Յօրանջնել : | . | . | . | | |
| Տըֆիկէ. | — Տըֆիած | . | . | Բիերինին | մէջ ժողովել. | — Բերանալիր : | . | | |
| Պաուզ | . | . | . | (Կովու, | և այլն) | ծիծին ծայրը : | . | | |
| Ակ. | . | . | . | Թոռնիին | ոգ բանելու | ծակը : | . | | |
| Դաղձ | . | . | . | Անանուխ, | նանէ | վայրի : | . | | |
| Դաշտահաւ | . | . | . | Աբեղանադ : | . | . | . | | |
| Կուոր ընկնալ | . | . | . | Սնանկանալ : | . | . | . | | |
| Ճշակ | . | . | . | Այր: | քարայր, | խորովիտը : | . | | |
| Թափիթըփա | . | . | . | Հաստ | լաւաշ, | շօթ : | . | | |
| Լուր | . | . | . | Երկաթէ | լծակ | ծանրութիւն | վերցընելու, | և | որմեր |
| | | | | | ծակելու | ։ | . | | |
| Տնօրիք | . | . | . | Տունը | շինուած | (բան) : | . | | |
| Պարտաւիկ | . | . | . | Փոքրիկ | սափոր : | . | . | | |
| Լողալ | . | . | . | Սահիլ : | . | . | . | | |
| Խըրչալա | . | . | . | Խեշափար : | . | . | . | | |
| Կոյ, | Կօ. | . | — Բնիօ է. | Ահա, | հաս, | թ. | իշուէ. | — Ահաւասիկ հոս է : | |
| Դա, | Դազ. | . | — Դազ. | Աստ, | հսու, | ա- | Այսակ | քեզի մօտ : | |
| Տասմէր | . | . | . | Դայենակ, | կանկարմած, | կաթնառու : | . | . | |
| Խէտի, | Ախեկ | . | . | Վերմակ : | . | . | . | | |
| Ծմէտ, | . | . | . | Որ և իցէ սասախիկ զունոյ աշքը | առնուլը : | . | . | | |
| Ճնաղ. | — Ճնաղ քաշել | . | . | Հաւքաշ, | ճինակ, | թ. | եատէս, | եատէս բռնել : | |

Ահեղ	Տանը սեան վրան յեցած մեծ գերանը , .որուն վրայ կը հանգին տանիքին գերաններուն (դարձերուն) ժայրերը :
Պլիւլ	Սրինգ հոլուաց :
Լամուկ	Տղայ թուրի (աղջիկ , մանչ) :
Կոպէկ	Ետոի տանիկ :
Շկուն	Խաւարծիլ :
Ճնճղան պաշար	Մութ կանաչազոյն խոռ մը :
Փեղփ տալ	Փայլիլ , փալիլիլ , շողալ , շողլողալ :
Խալ	Պիսակ , նիշ . թ . պէնէկ :
Կուզ	Փոքրիկ արծիւ :
Կրեանկոթ	Լիիայ :
Միրանհասուկ	Միջաւ մը , որ ծիրանի հասուննալու ժամանակ կը գոյանայ :
Դասղլսան	Փոսց սեղանյ :
Զաղզիկ	Հողէ ամանի և կամ թրծեալ աղիւսի կտորներ :
Խլըլըլիկ	Կանաչ մը , որ աղցան կը շինեն :
Փարփինա	Փրփինմ :
Ուրձ	Գետի մէջ ձևացած կղզի և թերակղզի :
Խուրիկ	Ալօրի կամ վեցկիր տաշին եղանց լուծը :
Խուրիկվար	Խուրիկը քչող տղան , որ եղան վիզը կը նըստի :
Երեքթիւն	Երեփուկ (խոռ) , Չորսնուկ , Վեցնուկ :
Պարեխ	Որոժի նման բոյս մը որ ցորենի մէջ ալ կը բարձրա- նայ , ծագիկը կապոյտ-ճերմակ փոքր ինչ վար- դացոյն :
Հշկաթնուկ	Դեղին ծաղիկ ունեցող խոռ մը , որուն կտրուած ցո- զունէն և աերեներէն կամնանման զառն հիւթ կը վազէ . զոր շաբարի վրայ կաթեցընելով՝ լու- ծողականի տեղ կը ծառայեցընեն :
Սակոս (Սակաս)	Մութ սապատ յարզի :
Քթոց	Սապատ փոքրիկ :
Սղիել	Մանրել , գշրել :
Տղիել	Մըլափիլ :
Դասել	Շահիլ :
Նուիկ	Ապորի մէջ զնելի բոյս մը , իբր համեմ :
Մնուշ	Հաւու , աղաւնոյ ողիլ :
Արաւուն	Գիհի ծառը :
Կըռ	Բոր . թ . ույզոզ :
Գինձ (սարի)	Ուկի ականջ , կովի ճակատ ,
Մէմէծծուկ	Խարածուա , խարածիլ , Տըտուանպոկ ,
Թթաւաշուկ	Փշփշուկ , Աղջիկիտակ , Չանտալա ,
Շամբալա	Շամբալա , կնորա , գեանդալա , Շրէշա :

Բանասէր

